1889

ՏԱՍՆ ԵՒ ՍՍԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի, կէս տարվանը 6 բուբլի։ Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ». կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Ցայտարարութիւնների համար վճարում են Իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դպրոցական կեանքից.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Հին-Նախիջևանից. Նամակ Խմբագրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Շարժում Կրիտէի վրա. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԲՕՐՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Քէհեան.

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

—

Մանկավարժութեան մէջ մի ակսիօմա կայ, որ ասում է՝ „Ուսուցիչը դպրոցի հոգին է“։ Դա լոկ մի գեղեցիկ ֆրազա չէ, այլ մի ճշմարտութիւն, որի գործադրութիւնը կարող է ամեն մի դպրոցի առաջադիմութեան գլխաւոր հիմքը լինել։ Եւ ճշմարիտ. յօրինեցէք օրինակելի դասագրքեր, զետեղեցէք դպրոցը ամենաշքեղ մի շինութեան մէջ, շրջապատեցէք դպրոցը առողջապահական բոլոր պայմաններին համապատասխանող յարմարութիւններով, սակայն եթէ ուսուցիչը ոգէտ է, անընդունակ և անպատրաստ իր պաշտօնի համար, այդ բոլոր յարմարութիւնները՝ թէ օրինակելի դասագրքերը, թէ գեղեցիկ շինութիւնը և թէ բոլոր միւս առաւելութիւնները կը լինեն ապարդիւն շռայլութիւններ, որոնցից դպրոցական գործը ոչինչ օգուտ չէ կարող ստանալ։ Դրա հակառակ, նախապատրաստված, արժանաւոր և հասկացող վարժապետը կարող է շատ գեղեցիկ կերպով կրթել, ուսուցանել և դաստիարակել իր սաներին նոյն իսկ այն ձախորդ դէպքերում, երբ նրա ձեռքում չեն լինի յարմար դասագրքեր, երբ մինչև անգամ դպրոցը զուրկ կը լինի արտաքին և ներքին շատ յարմարութիւններից....

Ահա այդ պարզ, բայց կարևոր ճշմարտութեան վրա հիմնվելով, ամեն ժամանակ և ամեն հասարակութեան մէջ դպրոցական գործի աջողութիւնը միշտ կապված է ուսուցչութիւն անելու և միջնակարգ կամ բարձրագոյն դպրոցներից աւարտած անձինք և այնպիսիները, որոնք միայն մի երկու տարի են նստել աշակերտական նըստարանի վրա,—միշտ անպակաս կը լինեն խառնակութիւններ և խռովութիւններ, որովհետև այդ տեսակ վարժապետների մէջ մանկավարժական, դաստիարակչական և դպրոցական ոչ մի խնդրի վերաբերութեամբ համաձայնութիւն չէ կարող կայանալ, և համերաշխութիւն չէ կարող լինել։

Եթէ հայոց դպրոցների ուսուցչական խմբերի մէջ անպակաս են խռովութիւններ, եթէ այդ ուսուցչական խմբերի մէջ անհամերաշխութիւնը ահագին կռիւներ առաջ բերելով, դպրոցը զանազան կռիւների և ինտրիգների կենտրոն է դարձնում,—այդ գլխաւորապէս պէտք է բացատրել նրանով, որ մեր դպրոցների մէջ կան ամեն տեսակ վարժապետներ և վարժուհիներ՝ և միջնակարգ դպրոցներից աւարտածներ, և բարձրագոյն դպրոցից ելածներ, և ոչ մի տեղ ուսում չառածներ, և զանազան դըպրոցների մէջ միայն մի երկու տարի ուսածներ, և նոյն իսկ հազիւ գրագիտութեան տեղեակ անձինք....

Դպրոցական ասպարիզում մի ընդհանուր ներքին համերաշխութիւն է տիրում և կրթութեան գործը մի որոշ ուղղութեան է հետևում միայն այն դէպքում, երբ դպրոցների ղեկավարները, այսինքն մանկավարժները, ունենալով դէթ մօտաւորապէս հաւասար նախապատրաստութիւն, և ունենալով դաստիարակութեան և դըպրոցի մասին մի որոշ հայեացք, կարողանում են իրանց մէջ համերաշխութիւն կայացնել և մանկավարժական գործին այս և այն ընթացքը տալ։ Հակառակ դէպքում ամեն մի դպրոցի մէջ այնքան ուղղութիւն և այնքան կուսակցութիւններ են լինում, որքան վարժապետներ և վարժուհիներ կան։

Ահա թէ ինչու իրաւունք տալ, որ ուսուցչութեամբ պարապեն այնպիսի անձինք, որոնք ոչինչ վարժապետական ցենզ, ոչինչ նախապատրաստութիւն չունեն, կը նշանակէ ոչ թէ միայն դասատուութեանը և դպրոցի դասընթացին վնասել, այլ կը նշանակի նոյնպէս և ուսումնարանները անվերջանալի խառնակութիւնների, խռովութիւնների, կռիւների և ինտրիգների մի ասպարէզ դարձնել, ուր երբէք ոչինչ համերաշխութիւն և մտքերի ներդաշնակութիւն լինել չէ կարող։

Հայոց դպրոցների մէջ ամեն տեսակ մարդկանց պաշտօն տալը տարաբաղդաբար ունի և ուրիշ վնասակար հետևանքներ, որոնցից մէկի վրա միայն մենք այս անգամ կանգ կառնենք։ Մեր խօսքը վարժապետների և վարժուհիների ռոճիկների մասին է։ Ո՞ւմ չէ յայտնի, որ մեր վարժապետների նիւթական դրութիւնը, խօսելով սովորական լեզուով, ոչ թէ միայն նախանձելի չէ, այլ նոյն իսկ անտանելի։ Անտանելի է, ասում ենք, որովհետև այժմ վարժապետներին 400—300—250 բուբլի ռոճիկ տալը սովորական բան է դարձել, իսկ վարժուհիներին տարեկան 200—150 և նոյն իսկ 120 կամ 100 բուբլի ռոճիկ առաջարկելը համարվում է նոյնպէս սովորական և շատ անմեղ վարմունք։ Մեր ընդհանրապէս աղքատ դըպրոցներում, ուր հոգաբարձուները անհոգութեամբ վերաբերվելով դէպի դպրոցների տնտեսական մասը, կարծում են թէ մեծ բարիք արած կը լինեն դպրոցին, եթէ վարժապետների ռոճիկը որքան կարելի է քչացնեն, այդ անմխիթար երևոյթը, այսինքն ուսուցիչների վարձատրութեան քըչացնելը, քանի գնայ կարող է աւելի սաստկանալ, և այն էլ կրկին այն պատճառով, որ հայոց դպրոցներում ուսուցչութիւն անելու իրաւունք են ստանում զանազան թերուսներ, և ոչ մի տեղ չաւարտած անձինք։ Դիցուք մի որ և է դպրոցի երրորդ կամ չորրորդ դասատնից աւարտած մէկը, շատ տարիներ կամ գրագրութիւն, համբուրի, ներողութիւն խնդրի...

—Հայ... հօյ... գոչեց Առաքէլը—լաւ մեծ մեծ ես ջարդում, Օհան քէհեա... մալը քոնը չէ, որ ղաղրը իմանաս, ղօլայ (հնչտ) բան է գութանը տալ ուրիշի....

—Տօ խելառ մանչ, որոտաց Յովհաննէս քէհեան—ուրիշը ո՞րն է, սա քո մեծ եղբայրդ չէ՞...

—Երկինք գետին որ իրար անցնի՝ գութանը չեմ տայ ու չեմ տայ... գոչեց Առաքէլը փոքր ինչ մտածելով զլուխը քորելուց յետոյ։

Յովհաննէս քէհեան բարկութիւնից գունատափվեց, քիչ էր մնում մի լաւ ապտակ իջեցնէր նրա երեսին, բայց ինքզինքը զսպեց և ասեց.

—Դէ գոռք գիտէք հիմի... գոռք որ իմ խօսքը կոտրեցիք, էլ հիմիկանց դէնը գուք գիտէք....

Եւ ետ քաշվեցաւ։

Յովհաննէս քէհեան յիսնամեայ մի քաջառողջ և խելօք անձ էր. ամբողջ Բասէնի թէ հայերը և թէ թուրքերը սիրում էին նրան, որովհետև նա թէ խելօք էր, թէ զուարթաբարոյ և թէ կատակաբան. ուր որ կռիւ էր լինում, Յովհաննէս քէհեան իսկոյն մէջ էր մտնում և կամ կատակներով, կամ հարուածներով և կամ իր համոզիչ խօսքերով՝ կռիւը դադարեցնում էր. ոչ մի հայ կամ թուրք նրա խօսքը չէր կոտրում. ամեն ինչ նրա խորհրդովն էր կատարվում։

Յովհաննէս քէհեան էլ շատ բարի սիրտ ունէր, աղքատները նրան շատ էին սիրում, որովհետև նա տալիս էր նրանց գութան, եթէ չունէին, սերմացու ցորեն, եթէ թուրքը—հարկապահանջը բոլորը տարել էր և կամ լծելու գոմէշ, եթէ պարտատէրը գրաւել էր։

Ինքն էլ փող տոկոսով տալով էր ապրում, բայց պատմում են թէ առաջին հինգ տարվայ մէջ գիւղացիներին անտանելի նեղութիւններ տալուց յետոյ, յանկարծ մի օր կանչեց իր պարտատէրներին, պատռտել տուեց բոլոր մուրհակները և նորից գրել տուեց, որի մէջ հարիւրին միայն ինն տոկոս նշանակեց, ճիշդ կառավարութեան օրէնքի համաձայն։

Եւ ահա թէ նա ինչու այդպէս արաւ։

186... թուականներն էր, երբ Յովհաննէս քէհեան դեռ ևս խոժոռադէմ, տրտում, մինչտ մտախոհ, նստած իր պոչը կտրած ձիու վրա, անդադար գիւղերն էր շրջում, նորոգում էր իր պարտատէրների մուրհակները, տոկոսները դրամագլուխների վրա էր աւելացնում, որից իւղ, որից ցորեն, որից գառ և այլն էր պահանջում իր հարիւրին քսան—քիչ տոկոս առնելուն համար։

Ամեն ոք վախենում էր նրանից, որովհետև Յովհաննէս քէհեան կողոպտում էր անխնայ այն պարտատէրներին, որոնք համարձակվում էին ասել թէ «հարիւրին քսան տոկոս առնելուց յետոյ խնդրենք մեզ հանդիստ թող, մինչև որ վճարենք»... ինչ ասել է, համարձակվի պարտատէրը վաշխառուին այդպէս ասել, համարձակվի ամեն օր եղով կերակուր ուտել, իր կնոջ, որդոց համար հագուստներ առնել, վաշխառուն իր մօտ գալու ժամանակ նրան փառաց ի փառս չը հիւրասիրել, չը լղել նրա ոտները և չան պէս չը քծնել նրա շուրջը... այդպիսիներին Յովհաննէս քէհեան մի լաւ ծեծելուց յետոյ բանտարկել էր տալիս, յետոյ ինքը միջնորդ դառնում, աղաչում էր և ամենից հպարտ գլուխներն էլ յաջողվում էր տրորելու իր ոտքերի տակը...

Մի օր, երբ նա քրքրում էր իր մուրհակները, յանկարծ մի մուրհակ ընկաւ ձեռքը, որի մէջ գրված կար, թէ Ամրագոժցի Խաչատուրը իրեն պարտք ունի հինգ ոսկի։ *)

*) Ցաճկական դրամների քանակութիւնը շատ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՔԷՀԵԱՆ

(Պատկեր Թիւրքահայերի կեանքից)

—

Հասան-Ղալա քաղաքից ոչ շատ հեռու գտնվում է Քէօփրի-քէօյ հայաբնակ գիւղը մի ձորակի մէջ։

Այդ գիւղում, սրանից մի քանի տարի առաջ, բնակվում էր Մկրտիչ քէհեան *), որը շատ ծերացած, օրից օր սպասում էր մահուան։

Ծերունի Մկրտչի տունը մի նշանաւոր նահապետական տուն էր, բաղկացած 30 անձներից. որդիներից Կարապետը ամուսնացրած՝ ունէր 4—5 մանրիկ թոռներ, իսկ կրտսերին—Առաքէլին մտադիր էր այնան ամուսնացնել՝ երբ ինքը ամառը ընկաւ մեռաւ։

Հազիւ թէ տան նահապետը մեռել էր, որ Կարապետը ու Առաքէլը միջտեղ ելան հայրական ժառանգութիւնը կիսելու։

Բաւական խաղաղութեամբ կիսեցին արտերը, եղները, գոմէշները, ոչխարները և ձիերը, նաև իէսիկները և կարասները. մէջտեղը մնաց միայն գութանը։ Ի հարկէ գութանը կիսել կարելի չէր, ուստի և երկու եղբայրներն էլ մըտաղիր էին այդ սեփականացնել։

—Ես որդոց տէր եմ, ասում էր Կարապետը։

—Ես էլ պիտի լինեմ, վրա էր տալիս Առաքէլը։

Եւ այսպէս վէճը սաստկացաւ ու սկսեցին միմեանց նախ ծանր խօսքեր ասել, ապա ծեծել։

Աղմուկը տարածվեց ամբողջ գիւղի մէջ և բոլորը այնտեղ թափվեցան։

*) Քէհեա, նշանակում է կառավարիչ։

Ո՛չ ոք կարողացաւ համոզել Կարապետին դուրթանը Առաքէլին թողնելու և Առաքէլին՝ դուրթանը Կարապետին թողնելու։

Ամեն միջոց դործ դրին, բայց այդ միջոցները աւելի ևս գրգռում էին նրանց և այդպիսով երկու եղբայրների կռիւը կամաց կամաց սկսեց ընդհանրական կռիւ դառնալ։

Այդ միջոցին ձերթեցի Օհան քէհեան, որը իր գործերի համար երեք օր էր Քէօփրի-քէօյ էր գտնվում և լսելով աղմուկը բաղմութեան հետ ներս էր մտել՝ ճղեց բազմութիւնը, մտաւ կուռղների մէջ, մէկին ապտակեց, միւսին հրեց, երրորդին թքեց երեսը և չորրորդին նախատելով, կուռղներին բաժանեց միմեանցից, ապա ձեռները կողքերին դրաւ և դառնալով երկու եղբարց՝ գոչեց.

—Տօ մանչեր... անամօթ, հայեասպդ (անամօթ) մանչեր, տօ ես 40 տարի է, որ Բասէնի գիւղերի մէջ թափառում եմ և դեռ ձեզ նման սնդակող ու անամօթ մարդիկ չեմ տեսել... տօ Առաքէլ, դարձաւ նա փոքր եղբօրը—դու դեռ մատ մը տղայ ես ու չես ամաչում հօրդ տեղը բռնող մեծ եղբօրդ այդպէս հայհոյում ես... թիւ... տօ չէ՞ որ ամօթ է.... մեծ եղբայրդ «օլուղ չոճուղի (զաւակների) տէր է, իսկ դու ոչինչ չունես... հայդէ, ասենք թէ վաղը ամուսնացար, հոգ չէ, հէլէ մինչև նոր արօր չինելդ դեռ պիտի լինիք «մէկ Քէօռ-օղլի ու մէկ Այվազ»... *) Ամօթ է, հայ չէք, ինչ էք թողնում որ այլազգը ձեր ղալմաղալը լսի ու դայ երկուսիդ գլխին էլ խփելով, գութանը ձեռքերնէդ առնի... տօ, Առաքէլ, ղէհ, ետ քաշուիր, գութանդ մեծ եղբօրդ տուր ու ձեռքն էլ

*) Մի ոճ է, որ նշանակում է մի այր և մի կին, միայն երկու անձ, որպէս էին Քէօռօղլին և իր Այվազը (ծառան)։

համբուրի, ներողութիւն խնդրի...

—Հայ... հօյ... գոչեց Առաքէլը—լաւ մեծ մեծ ես ջարդում, Օհան քէհեա... մալը քոնը չէ, որ ղաղրը իմանաս, ղօլայ (հնչտ) բան է գութանը տալ ուրիշի....

—Տօ խելառ մանչ, որոտաց Յովհաննէս քէհեան—ուրիշը ո՞րն է, սա քո մեծ եղբայրդ չէ՞...

—Երկինք գետին որ իրար անցնի՝ գութանը չեմ տայ ու չեմ տայ... գոչեց Առաքէլը փոքր ինչ մտածելով գլուխը քորելուց յետոյ։

Յովհաննէս քէհեան բարկութիւնից գունատափվեց, քիչ էր մնում մի լաւ ապտակ իջեցնէր նրա երեսին, բայց ինքզինքը զսպեց և ասեց.

—Դէ գոռք գիտէք հիմի... գոռք որ իմ խօսքը կոտրեցիք, էլ հիմիկանց դէնը գուք գիտէք....

Եւ ետ քաշվեցաւ։

Յովհաննէս քէհեան յիսնամեայ մի քաջառողջ և խելօք անձ էր. ամբողջ Բասէնի թէ հայերը և թէ թուրքերը սիրում էին նրան, որովհետև նա թէ խելօք էր, թէ զուարթաբարոյ և թէ կատակաբան. ուր որ կռիւ էր լինում, Յովհաննէս քէհեան իսկոյն մէջ էր մտնում և կամ կատակներով, կամ հարուածներով և կամ իր համոզիչ խօսքերով՝ կռիւը դադարեցնում էր. ոչ մի հայ կամ թուրք նրա խօսքը չէր կոտրում. ամեն ինչ նրա խորհրդովն էր կատարվում։

Յովհաննէս քէհեան էլ շատ բարի սիրտ ունէր, աղքատները նրան շատ էին սիրում, որովհետև նա տալիս էր նրանց գութան, եթէ չունէին, սերմացու ցորեն, եթէ թուրքը—հարկապահանջը բոլորը տարել էր և կամ լծելու գոմէշ, եթէ պարտատէրը գրաւել էր։

Ինքն էլ փող տոկոսով տալով էր ապրում, բայց պատմում են թէ առաջին հինգ տարվայ մէջ գիւղացիներին անտանելի նեղութիւններ տալուց յետոյ, յանկարծ մի օր կանչեց իր պարտատէրներին, պատռտել տուեց բոլոր մուրհակները և նորից գրել տուեց, որի մէջ հարիւրին միայն ինն տոկոս նշանակեց, ճիշդ կառավարութեան օրէնքի համաձայն։

Եւ ահա թէ նա ինչու այդպէս արաւ։

186... թուականներն էր, երբ Յովհաննէս քէհեան դեռ ևս խոժոռադէմ, տրտում, մինչտ մտախոհ, նստած իր պոչը կտրած ձիու վրա, անդադար գիւղերն էր շրջում, նորոգում էր իր պարտատէրների մուրհակները, տոկոսները դրամագլուխների վրա էր աւելացնում, որից իւղ, որից ցորեն, որից գառ և այլն էր պահանջում իր հարիւրին քսան—քիչ տոկոս առնելուն համար։

Ամեն ոք վախենում էր նրանից, որովհետև Յովհաննէս քէհեան կողոպտում էր անխնայ այն պարտատէրներին, որոնք համարձակվում էին ասել թէ «հարիւրին քսան տոկոս առնելուց յետոյ խնդրենք մեզ հանդիստ թող, մինչև որ վճարենք»... ինչ ասել է, համարձակվի պարտատէրը վաշխառուին այդպէս ասել, համարձակվի ամեն օր եղով կերակուր ուտել, իր կնոջ, որդոց համար հագուստներ առնել, վաշխառուն իր մօտ գալու ժամանակ նրան փառաց ի փառս չը հիւրասիրել, չը լղել նրա ոտները և չան պէս չը քծնել նրա շուրջը... այդպիսիներին Յովհաննէս քէհեան մի լաւ ծեծելուց յետոյ բանտարկել էր տալիս, յետոյ ինքը միջնորդ դառնում, աղաչում էր և ամենից հպարտ գլուխներն էլ յաջողվում էր տրորելու իր ոտքերի տակը...

Մի օր, երբ նա քրքրում էր իր մուրհակները, յանկարծ մի մուրհակ ընկաւ ձեռքը, որի մէջ գրված կար, թէ Ամրագոժցի Խաչատուրը իրեն պարտք ունի հինգ ոսկի։ *)

*) Ցաճկական դրամների քանակութիւնը շատ

ԳՎԿԺԿՍՈԳՏ ԳՎՖՅԳՂ

Ս. Ս.

Ելյ

գրքն տալ դպ. բրսիկմն վմտա ելմատ Ամդ. ենամեն ղ. իսմս դ.դպ.ելիսիչ.տնոտդ դտկ տ.ոտ.ոտ Ամդ.նսոտ ոչտնմ Ամ.ոտ Ամ.ոտ Ամ.ոտ

խաչակապ դիզի, ուր փոխադրված էր վանքից։ Արդարև ուսումնարանները փակվելուց առաջ, ես՝ որպէս ընկերութեան անփոփոխ անդամ, և մի և նոյն ժամանակ ծայրագոյն հոգևոր կառավարութիւնից նշանակված «խնամակալ վանական դպրոցի և կալուածոց Ս. Թարգմանչաց վանքի», միջնորդած էի ընկերութեան վարչութեան, որ վանական դպրոցին մի նպաստ նշանակեն, բայց իմ միջնորդութիւնը մնաց առանց հետևանքի, որովհետև ընկերութեան վարչութիւնը ինձ պատասխանեց, որ միջոցների սղութեան պատճառով անկարող է յարգել իմ խնդիրը։ Անցնում է բաւական ժամանակ։ 1885 թ-ի փետրվարի 21-ին, բոլորովին անսպասելի կերպով, ստանում ենք ընկերութեան գրութիւնը № 9, որով ընկերութեան խորհուրդը յայտնում է, որ ընդհանուր ժողովը դոյն թուականից նշանակում է տարեկան 60 ր. ի նպաստ վանական դպրոցի պահպանութեան։ Բայց այդ ժամանակ վանական դպրոց չը կար։ Հայր Շիրակունին թէև վերստին վանահայր էր նշանակվել Թարգմանչաց վանքի, բայց կանոնաւոր ուսումնարան պահելու ոչ նիւթական միջոց ունէինք և ոչ կրթական։

Ուսումնարանները վերաբացվում են նոր կանոնների հիման վրա։ Պէտք էր ունենալ, բացի կրօնական առարկաներից և հայոց լեզուից, նաև ռուսաց լեզուի և թուաբանութեան ուսուցիչներ. պէտք էր տարեկան առնուազն 7—800 ր. յատկացնել միմիայն ուսուցիչներին։ Այս պատճառով էլ, մինչև այդ մասին հոգալը, վանահօր հետ խորհրդակցելով, որոշել էինք պահել, ինչպէս ամեն մի կրօնաւոր իրաւունք ունի պահելու, վանահօր անմիջական հսկողութեան տակ, հինգ, վեց չափահաս քահանայացուներ, որոնց և աւանդվում էին եկեղեցական և կրօնական գիտելիքներ. վանահայրը իր աշխատութեան համար ստանում էր տարեկան 40 ր. վանքից և մասնաւոր ու աննշան թոշակադրամ սովորող տիրացուներից։ Քանի որ այս էր վանքի ունեցածը, ես չէի կարող այլապէս ընդունել ընկերութեան նպաստը, եթէ ոչ որպէս մի կամաւոր նուէր վանքին։ Եւ ես այդպէս էլ արի։ 1885 թ. ապրիլի 6-ին, մի գրութեամբ, № 13, բացատրեցի այս ամենը ընկերութեան վարչութեանը պարզապէս, աւելացնելով որ իրանց կողմից յատկացրած 60 ռուբլիները պիտի մտնեն վանքի ընդհանուր մուտքի մէջ, մինչև որ Աստուծոյ ողորմութեամբ և ազգայնոց ձեռնտուութեամբ կարող կը լինենք բանալ մտադրեալ ուսումնարանը։ Իսկ մինչև այդ բացման յաջողելը, հայր Շիրակունին մինչև օրս պարապում է քահանայացու պատրաստվողների հետ։ Մարդասիրական ընկերութեան խորհուրդը, իմ գրութիւնն ստանալուց յետոյ, նոյն թուի մայիսի 14-ին, № 32 գրութեամբ ուղարկում է ինձ երկու տարվայ նպաստը 120 ր. և խրախուսելով ինձ կատարումն տալ իմ մտադրութեանը, վանական կանոնաւոր դպրոցի բացման մասին, աւելացնում է, որ այդ գումարն ուղարկում է «ի բարենպատակ գործադրութիւն»։ Մի և նոյն ձևով ուղարկվում է ինձ 1887 թուի նպաստը։ Այնուհետև 1888 թուի յունվարի 29-ին, որ և է թիւրիմացութեան տեղ չը թողնելու համար, ես մի յայտարարութիւն եմ ուղարկում ընկերութեան ընդհանուր ժողովի անունով, ուր յիշատակելով, որ Ս. Թարգմանչաց վանքում մինչև այդ օրը անկարող եմ եղել կանոնաւոր ուսումնարան բանալ, խնդրում եմ ընկերութեան ընդհանուր ժողովին, որ եթէ կարելի է, այդ ուսումնարանը իր հովանաւորութեան ներքոյ առնէր, ապահովելով նրան աւելի նպաստ նշանակելով։

Պարզ չէ՞ արդեօք, որ ես չեմ ծածկած ընկերութեան խորհրդից իրերի իսկական վիճակը։ Եթէ պարզ է, ապա ինչու այդքան մեղադրանքներ և ակնարկութիւններ եղան իմ դէմ անցեալ և այս տարի լրագրութեան մէջ. ինչու՞ չարանենգ մարդիկ հաւատացնում են գործին անտեղեակ մարդկանց թէ ես Մարդասիրական ընկերութեան փողերը դուրս եմ կորզել և կերել։

Սրանով իմ ասելիքը վերջացնում եմ։ Կը գայ ժամանակ և հեռու չէ այդ ժամանակը, ամենքն կը բացվի և մանրամասնաբար կը հրատարակվի ի լուր ամենքի։

Ներսէս Տէր-Ներսէսեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Կ. Պոլսից մեզ գրում են յուլիսի 22-ից. «Երէկ երեկոյեան լուր տարածվեցաւ, որ պատրիարքը հրաժարական է ուղում տալ։ Այդ լուրի որ ատիճանի ստոյգ լինելը այս առաւօտ դեռ յայտնի չէ, բայց հաւանական կարող է լինել։»

—

Որովհետև հայոց եկեղեցական-ծխական ղեկավարներում վարժապետութիւն անել ցանկացողները մի քանի տարուց յետոյ պէտք է քննութիւն բռնեն և կառավարական դպրոցներից վկայական ստանան, ուստի շատերը դիմում են մեզ և բացատրութիւն խնդրում, թէ ուր և ինչպէս պէտք է քննութիւն տան, և թէ մեր թեմական դպրոցներում աւարտողները ինչ իրաւունքներով պէտք է օգտվեն քննութիւն տալիս։ Առաջարկում ենք այդպիսի խնդիրքներով մեզ դիմող վարժապետներին և վարժուհիներին դիմել իրանց դպրոցական իշխանութեան, որի պարտքն է անկասկած հաղորդել այդպիսի տեղեկութիւններ ցանկացողներին։ Վատ չէր լինի, եթէ զանազան «կանոնների» և ցուցակների հետ միասին հրատարակվէին և վերոյիշեալ տեղեկութիւնները։

—

Թիւրքաց Հայաստանի զանազան քաղաքներից մեզ հասած տեղեկութիւններից երևում է, որ այնտեղ թէ քաղաքներում և թէ գիւղերում դպրոցների թիւը ոչ թէ միայն չէ աւելանում, այլ նոյն իսկ եղածներից շատերն էլ փակվել են և փակվում են։ Դպրոցների թիւի օրից օր պակասելու պատճառը երկու է. մէկ որ Կ. Պոլսի զանազան ընկերութիւնները, որոնց նպատակն էր Հայաստանում դպրոցներ հիմնել՝ շատ մեծ նեղութիւնների և արգելքների են հանդիպում իրանց գործունէութեան ասպարիզում, իսկ միւս պատճառը տեղական ազգաբնակութեան աղքատութիւնն է, որ միջոց չունի մի չչափելի նըպաստ տալ՝ դպրոցներ պահելու համար։ Առհասարակ ներկայումս շատ խղճուկ վիճակի մէջ է դպրոցական գործը Թիւրքաց Հայաստանում։

—

Ցաւելով պէտք է նկատենք, որ հայոց դպրոցների վարժապետների և վարժուհիների ցուցակի մէջ, որ հրատարակված է Էջմիածնում, չը կայ և ոչ մի համալսարանական։ Ճշմարիտ ցաւալի է, որ հայոց ժողովրդական դպրոցների ուսուցչական խմբի մէջ չը կայ բարձրագոյն ուսման մի հատ ներկայացուցիչ....

—

Վիեննայի «Հանդէս Ամսօրեայ» ամսագիրը իր վերջին տետրակում բանալով մի նոր կարևոր բաժին, որը յատկապէս պէտք է զբաղվի առևտրական-տնտեսական նիւթեր մատակարարելով, ռուս-պարսկական վաճառականական յարաբերութեան մասին գրում է հետևեալը. «Պարսից Շահին Ռուսաստան և ուրիշ եւրոպական երկիրներն այց ելլելուն առթիւ՝ ռուս լրագիրները շատ մը յօդուածներ կը գրեն Ռուսիոյ և Պարսից մէջ եղած վաճառականութեան յարաբերութեանց նկատմամբ։ Չի կրնար տարակուսիլ որ այս երկու երկիրներու վաճառականութեան յարաբերութիւնք լաւագոյն դրից մէջ են կլիմայի և գետնի՝ ուստի և բերքերուն տարբերութեան պատճառաւ։ Ռուսաստան ամէն տարի ցորեան կարտադրէ Եւրոպիոյ միւս երկիրներուն, բայց ինքն ալ հարաւային բերքեր կընդունի Եգիպտոսէն, Հնդկաստանէն, Ամերիկայէն, և այլն։ Այս ամենայն բերքերը Պարսկաստան ալ կրնայ յառաջ բերել և ասոնց մշակութիւնը կրնայ շատ զարգանալ, եթէ Ռուսիա լաւագոյն դրից մէջ ըլլալով՝ զանոնք գնել կարենայ։ Կասպից ծովը Պարսկաստանի հիւսիսային [ամէնաբեր գաւառաց մօտ ըլլալով՝ դիւրին ճամբայ մըն է հաղորդակցութեան Վոլգայի և Նիժնի-Նովգորոդի հետ, որուն տօնավաճառաց մէջ ռուս վաճառականք արևելից վաճառականաց հետ գործ կը տեսնեն։ Ռուսաստան ամեն տարի հարիւր միլիոններ կուտայ Եւրոպիոյ բամբակ, մետաքս, բուրդ, գունեղէն և այլն գնելու, և զասոնք Անգղիայէն կը տիպուի գնել սուղ գնով, մինչ զասոնք Պարսկաստանէն ալ կրնար գնել արժան։ Ընդհակառակն Ռուսաստան կրնայ մրցիլ զոր օր. Անգղիոյ հետ պարսկական վաճառականոցաց նկատմամբ, որ 1885, 1886 և 1887 տարեաց մէջ $16^1/_2$ միլիոն ռուպլի, ուստի տարին իբր $5^1/_2$ միլիոնի վաճառք մուծած է Պարսկաստան։ Նոյն միջոցին մէջ Անգղիա Պարսից ծախած է $7^1/_2$ միլիոնի կամ տարեկան $2^1/_2$ միլիոնի վաճառք, ուստի Անգղիա տարին 3 միլիոն շահած է։ Նոյն միջոցին մէջ Ռուսաստան ալ 12 միլիոնի վաճառք մուծած է, ուստի տարեկան 4 միլիոնի. բայց գնած է Պարսկաստանէն բամբակ, մետաքս, միրգ, որիշ, գունեղէն և այլն 18 միլիոնի, տարեկան 6 միլիոնի. ուստի Պարսիկք տարին 2 միլիոն ռուպլի շահեցան, մինչ Անգղիա Պարսկաստանէն շահեցաւ ամեն տարի 2 միլիոն։ Այս ամենայն կրնայ յօդուտ Ռուսաստանի փոխուիլ, եթէ երկու տէրութեանց հաղորդակցութեան արգելքները բարձուին։ Արդէն Շահը հրամայած է որ Թեհերանէն դէպի Ռիշտ արքունի պողոտայ մը բացուի, մի և նոյն ժամանակ նաև Մուրադ ծոցի նաւուղին բացվեցաւ, որով Ռիշտի հետ հաղորդակցութիւնը դիւրացաւ։ Ցոյս կայ որ քիչ մը ետքը Պարսից ներքին գաւառքն շոգեկառքով կապուին Կասպից ծովուն հետ, և ասով երկու աշխարհաց վաճառականական յարաբերութիւնը շատ յառաջանայ։»

—

Կովկասեան ցուցահանդիսի շինութիւնը համարեա աւարտվելու մօտ է, և արդէն շուտով ձեռնամուխ կը լինեն այս և այն բաժինը պատրաստելուն և լրացնելուն։ Զանազան մասնագէտներ արդէն ցանկութիւն են յայտնել կազմակերպելու գինեգործութեան, կաթնատնտեսութեան, շերամապահութեան և դիւզատնտեսութեան զանազան բաժիններ։ Անդրկովկասի զանազան կալուածատէրեր իրանց որոշ բաժինները պէտք է ունենան։ Միակ պակասութիւնը, որ զգալի է այժմ էլ, այդ այն է, որ գիւղական ազգաբնակութիւնից շատ քչերն են ցանկութիւն յայտնում անմիջապէս մասնակցելու ցուցահանդիսին։

—

Մեզ ինդրում են ուշադրութիւն դարձնել այն բաղմաթիւ փոքր, 12—տարեկան երեխաների վրա, որոնք Թիֆլիսի յետ ընկած փողոցներում ծառայում են զանազան խանութներում։ Խանութպանները այդ աղքատ և անպաշտպան երեխաների հետ վարվում են այնպէս, ինչպէս կամենում են։ Առևտուրը վատ է գնում,—աղան իր «ջիդրը դուքնի աչկերտի վրա է թափում»։ Աղայի քէֆը լաւ չէ, կամ թէ նա հարբած է,—էլի «ջիդրը դուքնի աչկերտի վրա է թափում»։ Եւ այդ փոքր երեխաները բաւական չէ որ քաղցած են և անքուն են մնում օրերով, շատ անգամ էլ ծեծ են ուտում խանութպաններից, և դուրս գցվում փողոցները...

—

Մխիթարեան Միաբանութեան անդամ Գրիգորիս վարդապետ Գալէմքեարեան մեզ ուղարկել է իր աշխատասիրած մի գրքոյկ «Մոմագործութիւն» վերնագրով, որը ամբողջապէս վերաբերում է մոմ պատրաստելու եղանակներին և մոմի տեսակներին։ Եթէ գրքի հեղինակը համոզված է, որ իր աշխատութիւնը գործնական նշանակութիւն կարող է ունենալ, կը կարդացվի և ուղեցոյց կարող է լինել,—այդ դէպքում աջողութիւն ենք ցանկանում։

—

Թիֆլիսի ռուսաց գրականագէտներից մէկը՝ պ. Վիկտոր Դինգելշտեդտ արտասահմանից ուղարկել է մեզ անգլիերէն լեզուով գրած իր մի փոքրիկ աշխատութիւնը, որը վերաբերում է Կովկասի աշխարհագրութեանը։ Գրքոյկի սկզբում կանգ առնելով ընդհանրապէս Կովկասին վերաբերեալ աշխատութիւնների վրա, աշխատասիրողը վերջը մի քանի աշխարհագրական տեղեկութիւններ է հաղորդում Կովկասի մասին։

—

Մեզ գրում են ՆՈՎՈՐՈՍԻՑՍԿԻՑ հետևեալը. «Յուլիսի 10-ին գիշերը, ժամը 12-ին, անգլիական բեռնակիր շոգենաւից մի շվեդացի, որը ծառայում էր վերոյիշեալ շոգենաւում, պանդոկից վերադառնալիս, վրան յարձակվում են և տեղն ու տեղը սպանում, երևի կողոպտելու մտքով։ Այս ոճրագործութիւնից 4 օր առաջ էլի մի ուրիշ սպանման դէպք պատահեց. երկու ամուսիններ ժամի 10-ին գիշերը հիւրանոցից դուրս են գալիս, որ գնան շրջելու ծովափը. եղանակը պաղչելի էր. սրանց վրա յանկարծակի յարձակվում են չորս մարդ. ամուսնուն բռնում, կողոպտում և յետոյ մի ջրհորի մէջն են նետում. սարսափահար կինը կանչում է օգնութիւն. վրա են հասնում մարդիկ և խեղճին կիսամեռ հանում են ջրհորից։ Այս օրերս պատահեց մի քստմնելի անցք՝ մի մարդ առևանգեց մի աղջիկ։ Ողորմելի աղջիկը, ասում են, խենդացել է։ Գործը դատարանին է յանձնած։»

—

ՆՈՎՈՐՈՍԻՑՍԿԻՑ մեզ գրում են. «Յուլիսի 19-ին ժամը 9-ին Նիկուլսկիի զէնքերի խանութում մի 14 տարեկան տղայ ինքնասպանութիւն գործեց բէվոլվերով։ Պատճառը հետևեալն էր. գլխաւոր գործաւորը զարկում է տղային մի ապտակ։ Վերջինս գնում է զէնքերը դարսած սենեակը, վեր է առնում պատից կախած բէվոլվերը, ու արձակում իր վրա. գնդակը դիպչում է կրծքին։ Խեղճ երեխան զանգատվում էր, որ իրան հետ շատ ամարդի կերպով էին վարվում։ Սպանութիւնները սովորական են, և զարմանալին այն է, որ չարագործների հեռը չեն զանում։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՇԱՐԺՈՒՄ ԿՐԻՏԷԻ ՎՐԱ

—

Հեռագիրը սկսեց արդէն Կրիտէ կղզու ազգաբնակութեան շարժման մասին այնպիսի լուրեր բերել, որոնք և յուզիչ և մի և նոյն ժամանակ շատ բնական են. յուզիչ են, որովհետև քրիստոնեայ ազգաբնակութեան շարժումը արդէն արիւնահեղ ընդհարումների առիթ է տուել մահմէտական և քրիստոնեայ ազգաբնակութեան մէջ. բնական են, որովհետև երկրի այն դրութիւնը, որ գոյութիւն ունի Կրիտէի վրա, վերջ ի վերջոյ պէտք է առաջ բերէր դժգոհութիւն, դժգոհութիւնը պէտք է տանէր դէպի ապստամբութիւն, իսկ ապստամբութիւնն էլ դէպի արիւնահեղ կռիւներ։ Եւ այդպէս էլ եղաւ։

Այժմ Թիւրքը կառավարութիւնը և նրա հետ միասին ամբողջ Եւրոպան լաւ տեսնում են, թէ ինչպէս համբերութիւնը հատած քրիստոնեայ ազգաբնակութիւնը վճռել է կարական միջոցներով թեթևութիւն ձեռք բերել իր քաղաքական կեանքի համար։ Կրիտէի ազգաբնակութիւնը այլ ևս յոյսերով չէ խաբվում. նա չէ հաւատում զանազան խոստումներին, և պահանջում է անյապաղ բէֆօրմներ մտցնել,—հակառակ դէպքում ապստամբական շարժումները չեն դադարելու։ Թիւրք կառավարութիւնը, ինչպէս երևում է վերջին հեռագիրներից, երկիւղ կրելով այդ շարժման հետևանքներից, ցանկութիւն է յայտնել զիջումներ անելու, խոստացել է քրիստոնեայ նահանգապետ նշանակել։

Անկասկած այդ զիջումները և դէպի բարենորոգումներ տանող փոփոխութիւնները այն միակ ճանապարհն են կազմում, որով կարելի է խաղաղացնել բորբոքված ժողովրդին։ Ուրիշ ճանապարհ չը կայ. լոկ խոստումները ոչինչ չեն կարող անել, որովհետև աւելի քան տասն տարի է, որ խոստումներ են լինում, բայց չչափելի հետևանք չը կայ։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Պարիզից հեռագրում են, որ պարսից Շահը այնտեղ ևս շատ չքանչաններ է սկսել տալ զանազան անձանց. ֆրանսիական հանրապետութեան նախագահը ստացել է Իրանի միապետից նրա ադամանդազարդ պատկերը։

—Միլան թագաւորը այս օրերս խօսակցելով սերբական մամուլի ներկայացուցիչներից մէկի հետ, յայտնել է, որ իր Սերբիա գալը ոչինչ քաղաքական նպատակներ չէ ունեցել և չունի։

—Վիեննայից գրում են, որ Ֆրանց-Յոսէֆի կայսրի ճանապարհորդութիւնը դէպի Գերմանիա կը մասնակցի կոմս Կալնոկի, քաղաքական մի քանի գործեր կարգադրելու համար։

—Սոֆիայից հեռագրում են «Temps» լրագրին հետևեալը. «Միտրոպոլիտ Կլիմենտ կանչվեց դատարան, ուր նա մեղադրվում էր Կօբուրգեան պրինցին քարոզի մէջ անպատուելու գործում։ Միտրոպոլիտը հրաժարվեց դատարանին ներկայանալ, այդ պատճառով նա ձերբակալվեց և ձիաւորներով ուղարկվեց Սիստովօ։ Դատարանը 20 հազար ռուբլու գրաւական պահանջեց, և միտրոպոլիտը ձերբակալութիւնից ազատվեց միայն այն ժամանակ, երբ այդ գրաւականը ներկայացվեց քաղաքի ազգաբնակութեան կողմից։

—Եւրոպական մի քանի լրագիրներ հնթադրում են, որ Կրիտէի շարժումը կարող է շարժում առաջ բերել առհասարակ Բալկանի վրա։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Գաւառական աղա-հոգաբարձուի Թիֆլիս գրած հետևեալ նամակն են ուղարկել մեզ տպագրելու համար, իբրև նմուշ։

«Ցարդոյապատիւ և դերամեծար տէր....

Մեր շիլոները բանալու վախտը հասնում աւ։ Մենք, երեք հոգեպարձուներս աշխատում ենք

որքան կարելիս չուտով պանալ մեր ուսումարանը, էնպէս որ սեպտեմբերի մէկից երեխաները չէջ գնան։ Բայց որովհետև որ այս տարի վարժապետների համար նոր պրավիլներ են դուրս եկել էջմիածնում, ուստի խնդրում ենք, էս նամակը հասնելուն պէս, այդտեղից մեզ ուղարկէք էջմիածնում տպած պրեյսկուրանտը, որ այդտեղի կոնզիստորում կը լինի։

Մնամ ձեր բարեացակամ....»։

Պրէյսկուրանտ ասելով, ազա-հոգաբարձուն «վարժապետների և վարժուհիների ցուցակ» է ուզում ասել....

* * *

Ֆրանսիական պատգամաւորների ժողովին այս օրերս ներկայացրած է մի այսպիսի օրինագիծ. «Այն ծնողները, որոնք ունեն 7 զաւակ, ազատվում են թէ անձնական հարկերից, և թէ անշարժ կայքերի վրա դրած հարկերից»։

* * *

Հիւսիսային Ամերիկայի Միացեալ-Նահանգների մէջ եղած հնդիկների թիւը հասնում է 274,671-ի։ Դրանցից 34,495 դիտեն կարդալ անգլերէն։ Նստակեաց խաղաղ կեանք վարում են միմիայն 82,000 հոգի, մնացածները մինչև այժմ էլ թափառում են անտառներում և անապատներում, զբաղվելով որսորդութեամբ և ձկնորսութեամբ։

* * *

Վաղուց արդէն ֆրանսիական կառավարութիւնը աշխատում է տելեֆոն անցկացնել Պարիզի և Լոնդոնի մէջ։ Դրա հետ միասին աշխատում են խողովակներ անցկացնել Լամանշի ջրանցքի ամենանեղ տեղում՝ նամակներ ուղարկելու համար։ Շարժողութիւնը կը կատարվի էլեկտրականութեամբ։ Այդ նախագիծը իրագործելու համար կը ծախսվի մօտաւորապէս 25 միլիոն ֆրանկ։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 օգոստոսի։ Հրատարակված է բարձրագոյն հրաման, որը վերաբերում է Բալտեան նահանգների դատաստանական մասի և գիւղական ատեանների կերպարանափոխութեան։ Հրատարակված է այն կարգադրութիւնը, որի համաձայն երկաթուղիները կայարան բերվող ապրանքներից պէտք է վճարեն առանձին տուրք 1/5 կոպէկ, ապրանքները պահպանելու յարմարութիւնների համար։ Հրատարակված են ժամանակաւոր կանոններ՝ փոստ-հեռագրական խնայողական արկղների մասին։

ԲԵՐԼԻՆ, 1 օգոստոսի։ Կայսերական զոյգը ընտանեկան ճաշ տուեց ի պատիւ աւստրիական կայսրի։

ՊԱՐԻԶ, 1 օգոստոսի։ Բարձրագոյն ատեանին պարլամենտի աջակողմեան անդամները մի առաջարկութիւն ներկայացրին Բուլանժէի դատը անվաւեր համարելու համար, որովհետև այն գործողութիւնները, որ կատարել է Բուլանժէ, յանցանք չեն։ Բարձրագոյն ատեանը իրան այդ գործում իրաւասու համարեց։ Աջակողմեանները վճռեցին այլ ևս չը մասնակցել վիճաբանութիւնների մէջ։

ԼՕՆԴՈՆ, 1 օգոստոսի։ Եապոնիան դաշնագիր կապեց Ռուսաստանի հետ Նորերս Միացեալ-Նահանգների և Գերմանիայի հետ կապած դաշնագիրների նման—Լուր է տարածվել, որ Էիւբլանը փախել է Աւգանիստան։

ԲԵՐԼԻՆ, 1 օգոստոսի։ Աւստրիական կայսրը և երցհերցոգ Ֆրանց-Ֆերդինանդ, մեծ սվիտայի ուղեկցութեամբ, 5 ժամին ժամանեցին Տիրգարտէնեան կայարանը։ Կայարանում դտնվում էին՝ Վիլհելմ կայսրը, պրինցները, իշխան Բիսմարկ, գեներալ Գլո